

Հակառակն իրենց վրայ կատարուեցաւ փո-  
փոխութիւնը : Վասն զի Ասորիք չորրորդ,  
հինգերորդ և յաշորդ գարերուն ստէպ յԵ-  
ղիպտոս չուեցին, մանաւանդ թէ մաս մը  
մշտառ կերպով անդ հաստատուեցաւ Ա-  
ղերսանդրիոյ և Նիտրիոյ վանատանց մէջ .  
և բնական էր որ չափով մը տեղւոյն ազ-  
դեցութիւնը կրէին : Սայդ և շատ ստոյդ  
ապացոյց մը կար, Ս. Գրոց ցննալատական  
ասպարիզին մէջ, Փիլորունեան թարգմանու-  
թեան յԵղիպտոս 616-617ին վերաբնուու-  
թը . որ իւր աստղանշաններով, յօրելիինե-  
րով, լուսանցից մէջ նշանակուած ծանօթու-  
թիւններով ակնյատնի հետք մը կը կրէ ե-  
զիպտական ազգեցութեան :

Իսկ լատիներէն ձեռագրաց գտալով, այն-  
շափ նուազ են, բաղդատմամբ մնացածնե-  
րուն, տարակուսի տեղի տուողներն որ և  
ոչ խօսքերնին կ'ըլլայ: Քանի մը յոնարէն  
ձեռագրաց գոյութիւնը բաւական էր խնդրոյս  
առիթ տալու համար. բայց թէ ուր, ի՞նչպէս,  
ուսկից այդ փոփոխութիւնը կատարուեցաւ,  
հարցումներ են որոց ճիշդ պատասխան մը  
կարեի չէ տալ հիմն վեց օրինակներու աը-  
ւած տեղեկութիւններով:

Վերջապէս իմէլ յոնարէն գրչագրաց գառ-  
նանց, պիտի տեսնենց որ ընդհանրապէս  
խնդիր վերցնազներն, ըստ վկայութեան գրե-  
թէ ամէն ցննալատից, անցած են Եփիպ-  
տոսէ, եթէ հոն ալ շեն ընդորինակուած.  
որով մեծամասնութիւնը սերտ կապակցու-  
թիւն մ'ունի նոյն երկրին հետ, և ամէն ինչ

յօրինեալ նորոգմամբ: Բայց քանդի անդէտք էին  
մերում արուեստի, ի բազում մասանց թերա-  
ցեալ դորձն դառնէր. վասն որոյ առեալ մե-  
ժին Մահակայ և Միկրոպայ զմեզ առաքեցին  
յԱղերաբանդրիա՝ ի շեղոյ պամեծալի, ի ստոյդ  
յօրանալ (տեղեկանալ) ձեմարանին վերար-  
ևորեան (քննադատութեան) :

(Մովս. Խոր. Գ. ԿԱ):

1. Զենք ապրակուսէր որ Բար-Երէսս նոյն  
տուներու խանգարման դյուռիթիւնը Հայերէն  
կամ Դիտիներէն սորված ըլլայ: Կամ նոյն  
իսկ Փիլոքսենեան թարգմանութեան աստե-  
ղանիւներէն :

ինգրոյն ծագման տեղին զԵղիպտոս մեզ  
մասնաւնիշ կ'ընէ:

Հուսի եթէ ակնարկ մ'ալ տանց բնագրին,  
անհնարին կը թուի բացարձակապէս որ  
Յովհաննու Ե. զինոյն մէջ պատմուած հրա-  
չից զինաւոր օղակը, այն է չորրորդ հա-  
մարը, յետոյ ազուցուած ըլլայ: այլ ամէն  
ինչ կը մղեն այն համոզման թէ եղած է  
յապաւում մը, և այս յապաւման պատճառ՝  
ոչ այնչափ գերրնական զիպուածի մը գէմ  
զինուին, որչափ աստեղանիշի մը սիսալ կիր-  
առութիւնն և հասկրցումն եղած է:

Հ. Գ. ԶՐԱՔԵԱՆ



## ՃԱԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ

**Ո**ւ է Շիր են եղած առաջին գաղթող  
Հայերը ի ճաւաւ՝ և թէ ճիշդ որ թուականին  
զաղթած են, ի հեծուկս ամէն ջանուց չգտա-  
նեմ ուրեբ յիշատակութիւն: Սահյան այս-  
շափ յայտ է զի ի սկզբան ովթնտասներորդ  
գարու: Մազրա բաղարէն նոր Զաւլայշ գաղ-  
թած մէկ քանի Հայեր զնացած են եղել նաև  
ի Մանիլա՝ և ապա անտի եկած են ի Ճաւա-  
և իրենց բնակութիւն հաստատած են ի  
Պաթմավաս մայրութաղաքին:

Հային յատուկ աշալը ութեան՝ և մա-  
սաւանդ մամնակին բարեյաջող հանգամա-  
նաց չնորդիւ շատեր վանառականութեան  
մէջ լաւ յառաջադիմելով մեծ հարստութեան  
են տիրացած, ոչինչ նաւազ քան թիրտա-  
նական Հնկվաստանի Հայերը:

Ազգասիրութեան և եկեղեցասիրութեան  
սիրալի յիշատակներ են մնացած ապագայ  
սերնպարս:

Երջանկայիշատակ բարերարաց կարգին  
մէջ առաջին տեղ կը բռնեն Ազա Գեորգ  
Մանուկ (Մանիշարեանց): Սորա երկորին  
հարզագատ բորբ Տիկին Մարիամ Յակովի  
Յարութիւնեան և օրիորդ Թագուհի Մա-

նուկ (*Մանիշարեանց*) և *Մանուկ* Յորդա-  
նանեան \* :

1834ին Պարոն Յ. Յարութինեան հաս-  
տատած է ի Պաթաւիս Մատուռն մի \*\*, և  
յեսոյ 1854ին հասարակութեան հանգա-  
նակութեամբ, յորում յիշեալ երկու ազնիւ-  
թորք մեծագոյն նպաստող եղած են, կա-  
ռուցուել է այժմեան Ա. Յովհաննու Եկեղե-  
ցին, քաղաքին Արքունի Դաշտ կոչուած  
լաւագոյն մասում ի յիշաւակ յաւերժական  
երկու բազմերախտ Քերցն՝ կայ եկեղեցոյ  
հիւսիսային կողմում մարմարեայ մահարձան  
մի հայերէն արձանագրութեամբ :

Եկեղեցոյ այլեայլ ծախուց համար յատ-  
կացուած կայ մէկ հատ լաւ արդինարեր  
կալուած :

1855 թուականին նոյն երկու ազնուա-  
սիրա Քորք հաստատած են երկու ուսումնա-  
րաններ, մին ի Ն. Զուղա և միւաը ի Պա-  
թաւիս, որոց համար ևս չորք անշարժ կա-  
ռուածներ են յատկացուած :

Նոյն 1855 տարում՝ գարձեալ հանգա-  
նակութեամբ ազգայնոց, որոյ մեծ մասը  
նուիրած են նոյն երկու երանելի Ամոլը,  
հաստատուած է և Հայկեան Միաբանութիւն  
Զառու մնագուկը, Ճաւայի շքաւոր հայերին  
նպաստելու նպաստակաւ :

1880 թուականին Պաթաւիսում կայա-  
ցած ընդհանուր ծողովով սահմանուած է  
երեխին ազգային հաստատութեանց, այսինքն  
Եկեղեցոյ, Ուսումնարանին և Հայկեան  
Միաբանութեան համար կանոնագրութիւն,  
որ կառավարութեան կողմանէ փաւերացուած  
և յանձնաւորութիւն գրուած է :

Հինգ արժանաւոր անձինք կը կազմեն  
վարչութիւնը, որ կը կոչուի Ասեան Յան-  
ձնանձնանաց ազգային հաստատութեանց :

Երեք տարիէն մէկ՝ Ճաւայի ընդհանուր  
կայ գաղթականութեան բուէարկութեամբ

աեղի կ'ունենայ կառավարչութեան նոր ըն-  
տրութիւն :

Բաց ի վերի երեք հաստատութիւններէն,  
Ն. Զուղայու ազգային հիմնարկութիւններէ  
նաև երկուասանի չափ յանձնուած կան սոյն  
կառավարչութեան անտեսութեանը, որը,  
արձէ յիշաւակել, ամենայն խճի մոօք կա-  
տարեն իրենց ըստանձնած պարտաւորու-  
թիւնը :

Ճաւայում և Ն. Զուղայում ուսումն ստա-  
ցող հայ մանուկներէն զատ, ցանի տանիեակ  
տարիներէ ի վեր կալկաթայի Մարգասիրա-  
կան ճեմարանին մէջ ուսանող 12 տղայոց  
կրթութեան ամէն պիտոյըը կը հայթայթէն  
նոյն Մ. և Յ. ուսումնարանը :

Ի Հնդիկս Հովանդական գաղթած հայե-  
րը, շատ անշշան բացառութեամբ, եկած  
են Ն. Զուղայէ և Բիրտա . Հնդկաստանէ:  
Սակաւ ոմանց բոն հայրէնիքէ :

Գիխաւոր զբագլունքը եղած է ընդհան-  
րապէ՛ և այսօք ևս է, վաճառականութիւնը,  
որուն մէջ բաւականին յաջողութիւն են ու-  
նեցած :

Իբր երեսուն տարուվ յառաջ ոմանը ևս  
եղեկէ շաբարի — որոց մշակութիւն Ճաւայի  
ամենազիշաւոր բերքերէն մին է — գործա-  
րանատէր էին: Այս ձեռնարկ, սակայն, վաղ  
անյաջողութեան փափած լինելով, ընկերկար  
զգոյց կին Հայեր և ձեռնպահ, որոյ հետե-  
անոց 1886/7ի շաբարի մեծ ճնշամամին մէջ  
հայերը զրիթէ կորուստ չունեցան: Այլ կը  
գանուին այսօք հայի ձեռքում մի թէ երկու  
գործարանք, թէն բաղդատարար համեստ  
չափով:

Միջին Ճաւայի հիւսիսային մասերում ե-  
ղած են նաև կապալառուց Ափիոնի և Տէ-  
րութեան ուրիշ մենավաճառից, և շահած են  
մեծ հարսաւութիւն և կալուածատէր դարձած  
են, այլ բնչ ափսոս, որ զոցա այլասերուած

\* Պարոն Գ. Տէր Գ. Գասպարեան, ընակիչ  
Պաթաւիսյի, ի միջի քաւուր աշխատու-  
թեանց իւր զրիէ նաև այս բազմերախտ աղ-  
դայնոց համառա կենսագրութիւնը, որ 1883ին  
տպուած է ի Ն. Զուղա: Տեսրակին մէջ Պ.  
Գասպարեան արժանավայել դրուատեաք կը

խօսի բարեկարաց առատաձեռն բարեկործու-  
թեան, ազգասիրութեան և մանւաւնդ նոցա  
տառքինի վարուց և բարեպաշտական զգաց-  
մանց մասին:

\*\* Եկեղեցոյ Գաւաթի հարաւային կողմում  
ուր ներկայ մատենադարանն է:

և օտարացած սերունդը ժառանդելով հայրենիկան հարստովմիւնը միայն և ոչ հայենական ընդունակովթիւնն և ճարպիկովթիւնը, շատ կարճ ժամանակի մէջ ամէնը վատանած են և ազգին ոչինչ օգուտ հասցրած:

Կան այսօր դարձեալ երեք — շորք մասնաւոր կապալառուոք որք իւրենց ճարպիկութեան չնորհիւ լաւ զրամ կը շահին:

Պաթաւիայի երեխի վաճառականներէն, այժմ հանգուցեալ Պարան Գ. Ե. Գասպարեան, բաշածանիօթ է մեզ իւր ողջամտութեամբ, ազգասէր զգացմամբ և համեստութեամբը, և որ յընթացս երկար տարիների ամենայն ուղղամտովթեամբ վարած է ազգային զանազան պայտօններ, յես վաճառականներէն մէջ ընդերկար փայլելոյ, բանի տարիներէ ի վեր աեր եղած կը մեծատարած կալուածների, որոյ արդինքը հիմա նորա պատուելի ամուսինը և որդիք կը վայելն :

Հայերի վաճառականնովիւնը կը կայանայ զլիաւորագէս վաճառոց ներմուծանելով իւրապայէն, Սինկափորէ, Ճապոնիէ և մասամբ ևս Հնդկաստանէ: Նաև արտածելով ներքին բերքեն շաբար, խաչիէ, կասիխ, Հնդկական բնկայզ, նարփէ, պղպեղ, լեզակ և այլն:

Ալոնտորի միցման մէջ յաջողակ է Հայն բազմիցս ցան զեւրոպացիս: Կան և նորավաճառք յերկրամէջս այլ շատ փոքրաթիւ, ըստ որում զրիթէ անհնար է մրցել ձինացաց հետ որք ամէն աեղ կը գտնուին, զրիթէ ամէն բանի ձեռնարկած են, շատ չնչին շահու բաւարար, խիստ գործանեայ են այլ և բնաւորովթամբ իւրազախ:

Հայ արհեստաւորք հազիւ մի կամ երկու կան: Հայ արտեստաւորաց թիւը համեմատաբար քիչ են: Անիմք 2—3 մերենակործներ, յորոց մէկը լաւ անուանի է: Մի՛ այլ ճիւղ՝ որով կը պարապին այսօր երեք — շորք անձինք՝ լուսանկարչութիւնն է: Այս ասպարիդի մէջ մեր լաւ ծանօթ Պարոն Օ. Քիփրենեան, ի մեծ պարծանս մեր, առաջին տեղը կը բռնէ այսօր նիտըլանզական Հնդկաստանայ լուսանկարչաց մէջ, 1892ին տեղի ունեցած ցուցահանդէին մէջ հայ տաղմաղը զուին կեցաւ առաջնակարգ մետալին արժանանալով:

Ճաւայի և մերձակայ կղզեաց մէջ զատնուող հայերի թիւը ընդ ամէնը չէ աւելի ցան 150 հոգի երկու սեաէ: Մեծամասնութիւնը սակայն կը գտանուի Ճաւայում. և սոցս մէջ այր մարդոց իրը 90 տոկոսը բռն հայ — կեղրոնէ — ն. Զուզայէ և փոքր մասն ևս Հայաստանէ — գաղթած հայեր են: Հատեր ամուսնացած են հայուհոյ հետ. (վերջոցս 98 տոկոսը զաղթականութեան սերոնդը են), իսկ՝ նման միւս շատ զաղթականութեանց, կան ևս որ ի շզոյէ հայ աղջկան՝ օտարուհոյ հետ ամուսնանալու հարկադրուած են:

Հայերը միմեանց հետ ընդհանրապէս հայերէն միայն կը խօսին, թէ զիտեն և Անդիկերէն և մասամբ ևս Հողանկերէն: Այլ և չեն պակսեր որք ի համայս զաւակացը կամ լոկ վասն օտարափրութեան կը նախ ընտրեն շրջանում անզամ օտար լեզուով խօսիլ:

Հայերէնի ուսումն շնորհին լր. և թ. ուսումնարանին արգեանց, ըստ ներքին խզճի թելազրութեան մանկանց ծնողաց, կը պահպանուի ուր որ յարմար ուսուցիչ գտանուի, որպէս ի Պաթաւիա և ի Սուրբապայա:

Ցաւելսվ պէտք է յայտնեմ սակայն թէ վերջին յիշեալ բաղացէ հայ ծնողը հայերէնի ուսումնը մի տարիէ ի վեր զագրացրած են, այնու միակ պատճառաւ. . . . մի զարմանար, ընթերցող. որովհետեւ սէրը առ որ ինչ հայ և հայի է շատերի սրտն ցամաքել և պաղել է, և հայերէն լցուն այլ ևս անօգնութ ինչ կը համարեն: Ոչ միայն անօգնութ ինչ՝ այլ և նախատինց կը համարուի իրնց կութեան, որից ազատել կը փափարին իրենց օտար ոգուվ մնուցած զաւակները, և կը ճնին նաև իրենցիւ թօմափել այց զարցիլ «Հայ» գատանունը \*:

Ի հարկէ, խօսից ուզզամիտ Հայու վրայ չէ:

Ի պահպանութիւն հաւատայ և եկեղեցւոյն ունիմք ի Պաթաւիա մէկ քահանայ որ երեք տարիէն մի կու զայ ն. Զուզայէն:

\* Թերեւս ուրիշ անդամ կրկին դառնամ այս ցաւալի խնդիրն:

Կրօնասիրութիւնը , սակայն , հայերէնի ռաւման համար ցուցած եռանդէն աւելի ջերմագոյն չէ<sup>\*</sup> : Բացառութիւնը յարգելի են անշուշտ :

Եհանասիրութիւնն ե աշխարհահայեացը , յոյժ անմիթմարական է ասել , խորթարարոյ են արարել զաղթական հայերիս : Հայ լեզուն և հայ եկեղեցին ազգութեան զիմաւոր կապերն ե յատիկանիշերն են : Այդ յատիկանիշերի պահպանամբ կը պարծի ողջամիտ հայը իւր հնագարեան , տոկուն և յառաջդիմող ազգի անդամը ըլլալուն , և մշակուած եւրոպացին յարգանը կը ասնի առ այդ ազգ : Այլ հայը իւր պահարակելի անտարերութեամբ կը խորթանայ այսօր իւր հնաւանդ եկեղեցին և հայ լեզուն անօգուտ և աւելորդ ինչ կը համարի զաւակացն սովորեցնելու , մինչդեռ ասոր ծախուց համար վեճովի Ազգասիրացմէ աշանդուած դրամը կայ մատակարարելու , առանց որ իւր գրգանէ ամենափոքր գուղութիւն յանձն անդու :

Լորո Պայյըրն հայի համար ասած է ի միջի այլոց թէ . « առաջինութիւնը նոցախաղութեան են արգասիք , և թերութիւնը՝ բանակալութեան ազգմէնը » . Այլ այսօր երսպական ազատ երկրի մէջ ապրոյ և կիրթեւրոպացիների հետ շխռուզ հայերիս՝ թերութիւնը քնողով հանդերձ նոյնն աւելացնելը , անշաւու արատ պիտի բերէ հայ անուան , իւր էլ արգեօց . այդ հայն որ իւր հայ լինելուն համար կը շինի օտարին մօտ : Այլասիրուած է զա արգեօց . . . ոչ , զա բուն հայ տանէ , հայիկան հինդոսն զաղթած հայ է . այդ , օտարամոլ է նա կարի յոյժ այլ ոչ օտարացած : իսկ ինչո՞ւ վերացրենք նորա պաղութիւնը . . . ընտանեան ազգեցութեան արդեօց . . . :

Անձնական կատարեալ համոզումն է , եթէ տեղեակ լինէր հայն իւր անցեալ ազգային

և եկեղեցական պատմութեանը կունենար անտարակոյս ինցնաճանաշութեան անկախ զացումն , և առանց նուաստանալու պիտի որոշ շափով հպարտ զզար :

Հային վերագրուած միւս թերութիւնը – նախանձ և անմիթաբանութիւն – որը սակայն փոքրիկ շըջաններում առաւելապէս նկատելի են – թուի թէ ունաց րոյս բարոց կը կազմէ՝ և ՛չ բռնակալութեան ազգմունց : Եթէ միաբանել զիտենար հայն , մանաւանդ յօտարութեան , կարոզ կը արդարէ յոլով ասպարէզներում մեծամեծ շահարեր գործիր կատարել , որպէս կան օրինակներ , այլ տիրայի է ի գրի ասնել զի ծաւայի հայ զաղթականութիւնը նիւթականապէս կը յետազմէ : իսկ ազգայնական յարաբերութիւնը գողիր օրբստորէ կը թուզնան :

Միսիթմարական կողմ ևս կայ , այն է զի կան տակաւնին և քանի պատուելիներ որց թէ՝ նիւթականապէս լւա ապահովուած վիճակ մը ունին , և թէ՝ իւրինց ազգամիտութեամբ և ազնուութեամբը մեծարելի են և հայ զաղթականութեան անունը վեր կը պաշէն :

Պիտի չը մոնամ յիշել նաև թէ նետրընական հնդկային կառավարութեան ծառայութեան մէջ կը գտանուէն տեղւոյս սերնդէն հինգ վեց երիտասարդ հայ պաշտօնակալը . երիտաց զտատատանական պաշտօնեայը իսկ միւսները ներքին վարչութեան Գործակալը .

Ետոն և Մասնաւոր թուով երիտասարդը որբ հոս և երկուայում զիտական այլնայլ մատնահւողեր կ'ուսանին նոյնակօ կառավարութեան ծառայութեան մէջ մոնելու նպատակաւ , կամ թերենս լաւ արդինաւէտ փաստարանութեան գործով զրացիլ առանձին :

Ց. 8 և. 8.

Սուրաբ . 20 / 5 / 90.

\* Պարոն Գասպարեան՝ յիշածս տետրակին մէջ հոգելոյս Պ. Մանուկ Յորդանանեանի մասնի կ'ասէ . « Ես սիկւս Հնդկաստանի սա և եթ եր մատցեալ ի հնաւուց արանց բարեպաշտիք , որ յօժարակամ մեծարել զծէս և